հաստատում է, որ այդ պատերազմը բաղկացած է Սէյմի պատերազմներից, որ յիշեալ պետութեան կազմակերպութիւնը չի համապատասխանում միջազգային հանրային իրաւունքին և որ այդ պետութիւնը դեռ յայտարարութիւն չի արել իր անկախութեան մասին: Օսմանեան կայսերական կառավարութիւնը անկեղծօրէն բաղձալով Անդրկովկասի ժողովուրդների ազատ զարգացումը և կամենալով բարի հարեւանական յարաբերութիւնների մէջ մտնել այդ ժողովուրդների հետ՝ խնդրում է անդրկովկասեան կառավարութեան որոշել ու պաշտօնապէս յայտարարել ձևը այն կառավարութեան, որի կազմութեան մասին խօսում է ինքը, հողի սահմանները, պետական լեզուները և կրօնը, այլ և ճշտորոշել յիշեալ կառավարութեան վիճակն ու դիրքը օսմանեան կայսրութեան նկատմամբ»:

Մարտ 7-ին, 4-րդ նիստում, Չխենկելին նորից յայտարարեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պարտաւորեցուցիչ և ընդունելի չէ Անդրկովկասի համար՝ կրկնելով արդէն մի անգամ արած յայտարարութիւնը Անդրկովկասեան Սէյմի և կառավարութեան մասին՝ աւելացնելով նաև, որ «ամենայն հաւանականութեամբ Անդրկովկասը կը լինի ռամկավար, դաշնակցական հանրապետութիւն»: Անդրկովկասի հողը բաղկացած է Բաքուի, Գանձակի, Երեւանի, Թիֆլիսի, Քութայիսի, Բաթումի ու Կարսի նահանգներից և Սուխումի ու Զաքաթալայի շրջաններից: Դաղստանի և Սեւծովեան շրջանի միացումը Անդրկովկասին կախուած է իրենցից: Պետական լեզուն առ այժմ ռուսերէնն է, բայց պիտի դառնան վրացերէնը, հայերէնն ու թուրքերէնը. կրօնական տեսակէտից՝ Անդրկովկասում տիրում է խղճի ազատութիւն: Միջազգային տեսակէտից Անդրկովկասը բանակցութիւնների մէջ է Թիւրքիայի հետ և պատրաստւում է կնքել տեւական հաշտութիւն:

Այս յայտարարութեան ի պատասխան Ռէուֆ բէյը նորից կրկնեց, որ օսմանեան պատերազմը պնդում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի վրա: Լենինի կառավարութիւնը՝ տապալելով նախկին կառավարութիւնը՝ կատարուած փաստի զօրութեամբ իսկ բռնել է նրա տեղը: Սահմ. Ժողովը աւելի կամ պակաս հետաքրքրական միջադէպ է լոկ, որ մի աւելորդ անգամ ապացուցանում է Լենինի կառավարութեան ոյժը: Այն հանգամանքը, որ Անդրկովկասը չի ճանաչում այդ կառավարութիւնը, ունի ներքին պետական նշանակութիւն և չի կարող անդրադառնալ արտաքին յարաբերութիւնների վրա, քանի երկրի որևէ մի մաս չի անջատուել և միջազգային իրաւունքի սկզբունքներով չի յայտարարել իր անկախութիւնը և չի ստացել ուրիշ պետութիւնների ճանաչումը: Ներկայ բանակցութիւնները միայն մէկ նպատակ ունեն. պատրաստել և ընդունել տնտեսական, առեւտրական և ուրիշ տեխնիկական մանրամասնութիւններին վերաբերող և Բրեստ-Լիտովսկի դաշնագրից բխող պայմաններ — մի դաշնագիր, որը պարտադիր է և Անդրկովկասի համար: Միաժամանակ Ռէուֆ բէյը աւելացրեց, որ բանակցութիւնները սկսելուց առաջ Անդրկովկասը պէտք է յայտարարէ իր անկախութիւնն ու կառավարութեան ձևը:

Հինգերորդ նիստում, մարտ 8-ին, Չխենկելին նորից ու նորից պնդեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պարտաւորեցուցիչ չէ Անդրկովկասի համար և հաղորդեց Սէյմի փետր. 22 նիստի որոշումը, թէ «սկզբունքով հնա-